

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱՐԴՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ ԱՇԽԵՆ ԴԱՎԹԻ

**ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ**

ԺԳ. 00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆրանսերեն)
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի համար

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Վ. Բրյուսովի անվան
պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ

Ալինա Եղիազարյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝**

բանասիրական գիտությունների թեկնածու,
մանկավարժական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Նաիրա Երվանդի Դալյան

մանկավարժական գիտությունների թեկնածու
Հովիկ Վլադիմիրի Բլբուլյան

**Առաջատար
կազմակերպություն՝**

**Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թ. հունիսի 29-ին, ժամը 12:00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում: Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թ. մայիսի 27-ին:

«Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝



Թերեզա Յուրիի Ազատյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը

Ֆրանսերեն դարձվածային միավորները լեզվի բառապաշարի անբաժանելի և գործառության մասում կարևոր բաղադրիչ են: Դրանց իմացությունն ու նպատակային կիրառումը էապես նպաստում են ուսանողների բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը, ինչպես նաև հաղորդակցական կարողունակության ձևավորմանը: Լիարժեք օտարալեզու հաղորդակցություն հնարավոր չէ ապահովել առանց դարձվածային միավորների ձևաբանական, շարահյուսական, ոճական, խոսույթային և գործառական առանձնահատկությունների յուրացման:

Այս համատեքստում առաջնահերթ խնդիր է դառնում դարձվածային միավորների ուսուցման մեթոդների և ռազմավարությունների ընտրությունը՝ հաղորդակցական-ճանաչողական մոտեցման հիման վրա: Ֆրանսերենի մասնագիտական դասընթացում անհրաժեշտ է համակարգված ներգրավել ժամանակակից ուսուցման ռազմավարությունները՝ հաղորդակցական, ճանաչողական, վերճանաչողական, փոխհատուցող, հուզազգացական և սոցիալական, որոնք նպաստում են դարձվածային պաշարի արդյունավետ և նպատակային յուրացմանը:

Չնայած այն հանգամանքին, որ լեզվաբանության և մեթոդիկայի ոլորտում մշակվել են օտարալեզու դարձվածքների ընտրության, թարգմանության և կիրառման տարբեր մոտեցումներ, ֆրանսերենի դարձվածային միավորների ուսուցման ամբողջական մեթոդական համակարգը, հատկապես ՀՀ կրթական միջավայրում, դեռևս բավարար չափով մշակված չէ: Այդ պատճառով անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք գործոններ՝ ուսանողների լեզվական մակարդակը, ճանաչողական առանձնահատկությունները, մասնագիտական պահանջները, ուսումնամեթոդական նյութերի բնույթը, ինչպես նաև դասախոսների լեզվահաղորդակցական կարողունակությունների մակարդակը:

Ճանաչողական մոտեցման շրջանակում դարձվածային միավորների ուսուցումը նպատակահարմար է դիտարկել մենթալ բառապաշարի ձևավորման համատեքստում, քանի որ դրանք հաճախ ներկայացնում են պատրաստի ճանաչողական կառուցվածքներ: Դրանց իմաստը լիարժեք ընկալելու համար անհրաժեշտ է շրջանակային և հասկացության վերլուծություն, որը ենթադրում է դարձվածային միավորների կառուցվածքային, գործառական և ոճական բնութագրերի համակարգված ուսումնասիրություն: Այս առումով արդյունավետ է ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդների համադրումը՝ ապահովելով տեսական և գործնական բաղադրիչների փոխկապակցվածությունը:

Ուսուցման արդյունավետության բարձրացման կարևոր պայմաններից մեկը միջառարկայական կապերի ապահովումն է: Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների բազմալեզվության փորձը: Մասնավորապես այն հանգամանքը, որ ֆրանսերենը հաճախ դասավանդվում է անգլերենին զուգահեռ, նպատակահարմար է ներառել մեթոդական համակարգում՝ ապահովելով լեզուների համադրական ուսումնասիրման հնարավորությունը:

Դարձվածային միավորների ուսուցման արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է ոչ միայն հստակեցնել դրանց ընտրության սկզբունքները, այլև մշակել թեմատիկ բառացանկեր, որոնք կապահովեն դարձվածային պաշարի փոփոխությունը և համակարգված յուրացումը: Միաժամանակ կարևոր է պահպանել նյութի չափաբաժնի և կիրառելիության հավասարակշռությունը՝ խուսափելով դարձվածքների ոչ նպատակահարմար ծանրաբեռնվածությունից:

Ֆրանսերենի դարձվածային միավորների ուսուցումը բուհերում հաճախ կրում է ոչ համակարգված բնույթ և մեծապես պայմանավորված է դասավանդողի անհատական մոտեցմամբ: Ուստի դարձվածային միավորների նպատակային ընտրությունն ու դրանց ուսուցման մեթոդական կազմակերպումը դառնում են սույն հետազոտության առանցքային խնդիրները:

Դարձվածային միավորների ոճական առանձնահատկությունները ևս առանձնակի ուշադրության կարիք ունեն, քանի որ դրանց արտահայտչական և գնահատողական երանգները հաճախ դժվարացնում են ինչպես ուսուցման, այնպես էլ թարգմանության գործընթացը: Նշված հիմնախնդիրները ուսումնասիրել են ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան գիտնականները, սակայն դրանց մեթոդական կիրառության հարցերը դեռևս պահանջում են լրացուցիչ հետազոտություն:

Հիմնախնդրի մշակվածության աստիճանը

Դարձվածային միավորների ուսուցման, դրանց ընտրության, թարգմանության և կիրառության հարցերը բազմիցս ուսումնասիրել են ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան լեզվաբաններ և մեթոդիստներ: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են ֆրանսիական, ռուսական և հայկական լեզվաբանական ու մեթոդական աշխատություններ, որոնք վերաբերում են դարձվածաբանության լեզվամշակութային, ճանաչողական և հաղորդակցական առանձնահատկություններին: Սակայն ֆրանսերենի մասնագիտական դասընթացում դարձվածային միավորների ուսուցման ամբողջական մեթոդական համակարգը, հատկապես ՀՀ բուհական կրթական միջավայրում, դեռևս բավարար չափով մշակված չէ, որով պայմանավորվում են հետազոտության անհրաժեշտությունն ու արդիականությունը:

Հետազոտության նպատակն է հիմնավորել և մշակել ֆրանսերենի դարձվածային միավորների ընտրության և ուսուցման մեթոդական

համակարգը մասնագիտական դասընթացում՝ ապահովելով դրանց արդյունավետ ընկալումը, յուրացումը և կիրառումը խոսքում:

Հետազոտության օբյեկտը ֆրանսերենի մասնագիտական դասընթացում բառապաշարի ուսուցման համակարգն է:

Հետազոտության առարկան ֆրանսերենի մասնագիտական դասընթացում դարձվածային միավորների ընտրության և ուսուցման գործընթացն է:

Հետազոտության գիտական վարկածը

Ենթադրվում է, որ ֆրանսերենի մասնագիտական դասընթացում դարձվածային միավորների ուսուցման արդյունավետությունը կբարձրանա, եթե այն իրականացվի հաղորդակցական, ճանաչողական և վերճանաչողական ռազմավարությունների համակցված կիրառմամբ՝ հիմնված հայերենի և ֆրանսերենի դարձվածային համակարգերի զուգադրական վերլուծության, ինչպես նաև դասընթացի բովանդակային և գնահատման պահանջների հաշվառման վրա:

Հետազոտության խնդիրները

- ուսումնասիրել ֆրանսերենի և հայերենի բառապաշարին, մասնավորապես դարձվածային պաշարին վերաբերող զուգադրական-տիպաբանական գրականությունը,

- համակարգել դարձվածային միավորների ընտրության և ուսուցման ռազմավարությունները,

- բացահայտել դարձվածային միավորների կառուցվածքային և բովանդակային առանձնահատկությունները՝ հաշվի առնելով հայերեն համարժեքները,

- մշակել ֆրանսերենի դարձվածային միավորների ուսուցման մեթոդական համակարգ՝ հաշվի առնելով մասնագիտական դասընթացի առանձնահատկությունները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը

Հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմում են օտար լեզուների բառապաշարի ուսուցման, մասնավորապես դարձվածային միավորների դասավանդման հաղորդակցական և ճանաչողական մոտեցումների վերաբերյալ ժամանակակից տեսություններն ու հայեցակարգերը: Հետազոտությունը հիմնված է հայ, ֆրանսիացի և ռուս լեզվաբանների, դարձվածաբանների և մեթոդիստների աշխատությունների վրա, մասնավորապես՝ Պ. Բեդիրյանի, Ա. Բարլեզիզյանի, Ա. Հ. Նազարյանի, Շ. Բալլիի, Պ. Գիրոյի, Ա. Ռեի, Վ. Ժուկովի, Վ. Մորկովկինի, Ն. Շախսուվարովայի, ինչպես նաև Ա. Չամոտի և Զ. Ռոբինսի տեսական դրույթների վրա:

Հետազոտության մեթոդները՝

Առաջադրված խնդիրների լուծման համար կիրառվել են հետևյալ մեթոդները՝

- ուսումնամեթոդական նյութերի վերլուծություն,
- համեմատական վերլուծություն,
- դասալսումներ և մշտադիտարկում,
- փորձարարական ուսուցման արդյունքների վերլուծություն:

Հետազոտության գիտական նորույթը

Առաջին անգամ առաջարկվում է ֆրանսերենի դարձվածային միավորների ուսուցման ամբողջական մեթոդական մոդել, որը հիմնված է ժամանակակից ուսուցման ռազմավարությունների համադրման վրա և կիրառելի է մասնագիտական դասընթացում:

Հետազոտության տեսական նշանակությունը

Հետազոտության շրջանակում ճշգրտվել են դարձվածային միավորների ուսուցման ռազմավարությունները, մշակվել է մեթոդական համակարգ՝ հիմնված ճանաչողական և հասկացության վերլուծության վրա:

Հետազոտության գործնական նշանակությունը

Արդյունքները կարող են կիրառվել ֆրանսերենի և այլ օտար լեզուների դասավանդման ընթացքում, ինչպես նաև ուսումնամեթոդական նոր նյութերի մշակման մեջ:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները

1. Դարձվածային նվազագույնը պետք է հստակեցվի բառապաշարի նվազագույնի սահմանման շրջանակներում՝ հիմք ընդունելով քերականական, բառային, թեմատիկ-իրադրային և երկրագիտական նվազագույնները՝ անկախ այն հանգամանքից, թե դրանք օտար լեզվի ո՞ր միավորների ուսուցման համար են նախատեսված:

2. Արդյունավետ է ինչպես անձանոթ, այնպես էլ ուսանողներին արդեն հայտնի ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցումը. առաջինները հիմնականում զարգացնում են սովորողների միջնորդական (վերլուծական, թարգմանական) կարողությունները, իսկ երկրորդները՝ օտար լեզվով բանավոր և գրավոր խոսքը:

3. Դարձվածային միավորների յուրացման կարևոր ռազմավարություններից է դրանց ուսումնասիրումն ըստ բաղադրիչների, հատկապես այն դեպքերում, երբ ասույթները, ասացվածքները և առածները ներառում են մարմնի մասերի, կենդանիների, տարվա եղանակների կամ գույների անվանումներ:

4. Ֆրանսերեն դարձվածային միավորների ընտրության սկզբունքների ձևավորման ընթացքում առաջնային են լեզվակիրների լեզվամտածողության, հաղորդակցական վարքագծի (խոսքային և ոչ խոսքային) ուսումնասիրման խնդիրները: Դարձվածային միավորների արդյունավետ ներմուծումն ու

համակողմանի ուսուցումը ենթադրում են տվյալ ժողովրդի լեզվամշակութային պատկերի յուրացում, սոցիալական վարքագծի օրինաչափությունների ըմբռնում, հաղորդակցության մերձակա և հեռակա գոտիների տարբերակում, իրական խոսքային իրավիճակների մոդելավորում, ինչպես նաև ազգային և մշակութային կարծրատիպերի հաղթահարում: Կարևոր է նաև ամբողջական պատկերացում կազմել տվյալ ազգի սովորույթների, ավանդույթների, բառարգելումների (տաբուների), հավատալիքների և խորհրդանշական համակարգերի մասին:

5. Անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաների կիրառումը հատկապես արդյունավետ է ուսումնասիրվող հասկացության հեռակա զուգորդական գոտում, որտեղ դարձվածային բառակապակցությունների կառուցվածքային կայունությունը հարաբերական է: Դարձվածային սերտաճումների և միավորումների կիրառմամբ, ինչպես նաև մերձակա զուգորդական գոտու հաշվառմամբ հնարավոր է մոդելավորել իրական խոսքային տարբեր իրավիճակներ:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ապահովվում է կիրառված մեթոդների համապատասխանությամբ, տեսական հիմնավորումներով և փորձարարական արդյունքների վերլուծությամբ:

Հետազոտության փորձարարական հիմքը

Հետազոտության փորձարարական հիմք են հանդիսացել Վ. Բյուսովի անվան պետական համալսարանի Թարգմանության և Միջմշակութային հաղորդակցության և քաղաքագիտության ֆակուլտետների ուսանողները, որոնց մասնակցությամբ իրականացվել է փորձարարական ուսուցում՝ ուղղված ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման առաջարկվող մեթոդական համակարգի փորձարկմանը և արդյունավետության գնահատմանը:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունը

Հետազոտության արդյունքները զեկուցվել են Վ. Բյուսովի անվան պետական համալսարանի Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնում:

Հետազոտությունը կատարվել է երեք փուլով.

➤ առաջին փուլում (2024 թ.) հավաքվել և ընտրվել է համապատասխան գրականություն, հստակեցվել են առանցքային հասկացություններն ու կարգերը: Բացահայտվել են ֆրանսերենի դարձվածային միավորների առանձնահատկությունները: Սահմանվել են փորձարարական ուսուցման փուլերը և ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման ռազմավարությունները,

➤ երկրորդ փուլում (2024–2025 ուսումնական տարի) սահմանվել է փորձարարական ուսուցմանը մասնակցող ուսանողների կազմը, վերլուծվել են նրանց նախասիրությունները, գնահատվել է լեզվահաղորդակցական

կարողությունների մակարդակը, ինչպես նաև հստակեցվել են գնահատման չափանիշները,

➤ երրորդ փուլում (2025–2026 ուսումնական տարի) իրականացվել է փորձարարական ուսուցում՝ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Թարգմանության և Միջմշակութային հաղորդակցության և քաղաքագիտության ֆակուլտետների երրորդ կուրսերում: Ստուգվել և հիմնավորվել է առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունը: Ամփոփվել են հետազոտության արդյունքները:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությունը ներառում է 11 աղյուսակ, 14 գծապատկեր, 9 նկար: Ատենախոսության ընդհանուր ծավալը 136 համակարգչային էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հիմնախնդրի մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, վարկածը, խնդիրները, հետազոտության մեթոդները, մեթոդաբանական հիմքը, հետազոտության փուլերը, սահմանված է հետազոտության գիտական նորույթը, պարզաբանված է տեսական և գործնական նշանակությունը, ներկայացված են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Առաջին գլխում՝ «Դարձվածային միավորների ուսուցման առանձնահատկությունները ֆրանսերենի մասնագիտական դասընթացում», ուսումնասիրվում են ուսուցման տեսական և մեթոդական հիմքերը, դրանց ընտրության սկզբունքները, լեզվամշակութային և հաղորդակցական առանձնահատկությունները, ինչպես նաև ուսուցման ռազմավարությունները: Գլխում դարձվածային միավորները դիտարկվում են ոչ միայն որպես լեզվական, այլև որպես մշակութային, ճանաչողական և հաղորդակցական արժեք ունեցող միավորներ, որոնց յուրացումը նպաստում է սովորողների լեզվահաղորդակցական և միջմշակութային կարողունակությունների ձևավորմանը:

«Դարձվածային միավորների ընտրության չափանիշներն ու սկզբունքները ֆրանսերենի մասնագիտական դասընթացում» ենթագլխում հիմնավորվում է, որ դարձվածքների ընտրությունը պետք է իրականացվի հաղորդակցական արժեքի, հաճախականության, լեզվամշակութային նշանակության, թեմատիկ համապատասխանության, կառուցվածքային և իմաստային համարժեքության սկզբունքներով: Շեշտադրվում է ճանաչողական-հաղորդակցական մոտեցումը, որի շրջանակում դարձվածքները դիտարկվում

են որպես լեզվամտածողության և ազգային մշակույթի արտահայտման միջոցներ: Վերլուծվում են Շ. Բալլիի և Պ. Գիրոյի տեսությունները, ըստ որոնց դարձվածքները միաժամանակ ունեն արտահայտչական և ամբողջական իմաստային բնույթ:

Ներկայացվում են բազմաթիվ լեզվամշակութային օրինակներ, մասնավորապես՝ *piquer un chien* - թեթև քուն մտնել, *rompre les chiens* - ընդհատել խոսակցությունը, *couper la queue à son chien* - ավարտել սկսած գործը դարձվածքները, որոնց միջոցով բացահայտվում են «շուն» բաղադրիչի զուգորդական և մշակութային իմաստները ֆրանսերենում: Ուսումնասիրվում են նաև անտիկ, աստվածաշնչյան և միջազգային դարձվածքները՝ *le fil d'Ariane* - Արիադնայի թել, *enfants de Caïn* - Կայենի զավակներ, *advocatus diaboli* / *avocat du diable* - սատանայի փաստաբան և այլն, որոնց ուսուցումը նպաստում է սովորողների ընդհանուր մշակութային գիտելիքների ընդլայնմանը: Հիմնավորվում է, որ դարձվածքների ուսուցման արդյունավետությունը բարձրանում է բնագրայնության, փուլային ուսուցման և միջմշակութային համադրության պայմաններում:

«Ֆրանսերենի խոսակցական ոճի դարձվածային միավորների ուսուցման ռազմավարությունը» ենթազխում ներկայացվում է ճանաչողական, վերճանաչողական և փոխհատուցման ռազմավարությունների համակցված կիրառման անհրաժեշտությունը: Նշվում է, որ ուսանողները պետք է ոչ միայն յուրացնեն դարձվածքների իմաստը, այլև կարողանան պլանավորել, վերահսկել և գնահատել սեփական ուսումնառության գործընթացը: Այս համատեքստում կարևորվում են Ա. Չամոտի և Զ. Ռոբինսի վերճանաչողական մոտեցումները:

«Ֆրանսերեն խոսակցական ոճի դարձվածքների լեզվաոճական առանձնահատկությունները» ենթազխում վերլուծվում է դարձվածքների արտահայտչական, հուզական և գնահատողական բնույթը, ինչպես նաև խոսակցական լեզվում դրանց գործառույթը: Ներկայացվում են խոսակցական դարձվածքների օրինակներ՝ *lâcher un mot* - բերանից (դուրս) թոցնել, *en faire tout un fromage* - լուր ուղտ շինել, *changer d'opinion comme de chemise* - կարծիքը հաճախակի փոխել, ձեռնոցի պես փոխել, որոնք խոսքին հեզնական, պատկերավոր և հուզական երանգավորում են տալիս:

Հիմնավորվում է, որ խոսակցական դարձվածքները նպաստում են խոսքի բնականացմանը և լեզվակիրների հաղորդակցական վարքագծի ընկալմանը: Կրկնաբանությունները, չափազանցությունը, հեզանքը և փոխաբերությունը ֆրանսիական խոսակցական մշակույթի կարևոր բաղադրիչներ են, որոնց կիրառումը խոսքում իր ուրույն դերն ունի:

«Ժողովրդանուն և դիցանուն բաղադրիչներով ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման ռազմավարությունը» ենթազխում

քննության են առնվում տվյալ բաղադրիչներով ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման առանձնահատկությունները:

Վերլուծվում են ժողովրդանուն բաղադրիչով դարձվածքները, որոնցում արտահայտվում են տարբեր ազգերի վերաբերյալ ձևավորված լեզվամշակութային կարծրատիպերը: Ներկայացվում են *querelle d'Allemand* - բառացի՝ գերմանական վիճաբանություն, այսինքն՝ վիճաբանություն մանրութների համար, դիտավորյալ վեճ աննշան բաների պատճառով, *fumer comme un Suisse* - ծխել շվեյցարացու պես, ծխել շոգեքարշի նման, *réponse de Normand* - նորմանդական պատասխան, այսինքն՝ խուսափողական պատասխան և այլ դարձվածային միավորներ, որոնք արտացոլում են ֆրանսիական մշակությամբ այլ ժողովուրդների վերաբերյալ ձևավորված պատկերացումները: Նշվում է, որ նման դարձվածքների ուսուցումը նպաստում է ոչ միայն լեզվական, այլև միջմշակութային գիտելիքների ձևավորմանը:

Նշվում է, որ ժողովրդանուն և դիցանուն բաղադրիչներով դարձվածային միավորների ուսուցման ընթացքում առավել արդյունավետ են ճանաչողական, վերճանաչողական և փոխհատուցման ռազմավարությունների համակցված կիրառումը, դարձվածքների ծագումնաբանության ուսումնասիրությունը, ինչպես նաև բնագրային և մշակութաբանական նյութերի ներգրավումը:

«Ազգամշակութային նշույթավորում ունեցող դարձվածքները» ենթազբառվում վերլուծվում են սնահավատությունների, ժողովրդական պատկերացումների և ազգային մշակույթի հետ կապված դարձվածքները՝ *croiser les doigts* - պաշտպանել չար աչքից (բառացի՝ մատները խաչել), *briser un miroir* - դժբախտություն կամ անհաջողություն կանխագուշակել (բառացի՝ հայելի կտրել), *rencontrer un chat noir* - դժբախտություն պատահել կամ անհաջողություններ կանխագգալ (բառացի՝ սև կատվի հանդիպել) և այլն: Նման դարձվածքները նպաստում են սովորողների լեզվամշակութային իրազեկության ձևավորմանը և օտար մշակույթի ընկալմանը:

Հատկապես ընդգծվում է ֆրանսերեն և հայերեն դարձվածքների համեմատական վերլուծությունը, որի միջոցով բացահայտվում են ինչպես համընդհանուր, այնպես էլ ազգային առանձնահատկությունները:

«Մշակութային բաղադրիչը ֆրանսերեն և հայերեն դարձվածային միավորներում» ենթազբառվում հիմնավորվում է, որ դարձվածքները լեզվի այն միավորներից են, որոնք առավել ամբողջական կերպով արտացոլում են ժողովրդի լեզվամտածողությունը, ազգային արժեքները, պատմամշակութային փորձը և աշխարհընկալումը: Նշվում է, որ դարձվածքների բառացի թարգմանությունը հաճախ չի ապահովում դրանց ճիշտ ընկալումը, քանի որ դրանք ունեն ոչ միայն լեզվական, այլև մշակութային ենթաշերտ:

Վերլուծվում են ֆրանսերեն դարձվածքներ՝ *entrer comme dans un moulin* - չոբանի պես ներս ընկնել, ասես գոմ մտնել (բառացի՝ մտնել մի տեղ, ինչպես

ջրադացը), juger d'une chose comme un aveugle des couleurs - խելքը բան չկտրել, ոչինչ չհասկանալ (բառացի՝ մի բանի մասին դատել, ինչպես կույրը՝ գույների), avoir la bouche comme un four - բերանը մինչև ականջները բացել (բառացի՝ վառարանի պես մեծ բերան ունենալ), որոնք բառացի թարգմանությունները հայախոս սովորողի համար հաճախ անհասկանալի են, մինչդեռ իմաստային թարգմանությունը հնարավորություն է տալիս բացահայտելու դրանց իրական հաղորդակցական արժեքը:

Հատուկ ուշադրություն է դարձվում կենդանիների, բույսերի և մարդու մարմնի մասերի անուններով կազմված դարձվածային միավորներին, որոնք հաճախ ունեն հայերեն համարժեքներ: Ներկայացվում են travailler comme un bœuf - եզի պես աշխատել, brave comme un lion - առյուծի պես խիզախ, rusé comme un renard - աղվեսի պես խորամանկ, vivre comme chien et chat - շուն ու կատվի պես ապրել դարձվածքները, որոնք վկայում են տարբեր լեզուներում համամարդկային պատկերացումների առկայության մասին:

Առանձնակի տեղ է հատկացվում «աչք» բաղադրիչով հայերեն դարձվածքների և դրանց ֆրանսերեն համարժեքների համեմատական քննությանը: Ներկայացվում են fermer les yeux - աչք փակել, voir d'un bon œil - բարի աչքով նայել, manger / dévorer des yeux - աչքերով ուտել, ne pas en croire ses yeux - աչքերին չհավատալ, regarder du coin de l'œil - աչքի ծայրով նայել դարձվածքները, որոնք ցույց են տալիս, որ «աչք» բաղադրիչը երկու լեզուներում էլ հաճախ արտահայտում է ոչ միայն տեսողական, այլև հոգեբանական և հուզական վերաբերմունք:

Հիմնավորվում է, որ դարձվածքների ուսուցման ընթացքում առավել արդյունավետ է համատեղել իմաստային և հասկացական մոտեցումները: Կարևորվում են դարձվածքների թեմատիկ խմբավորումը, համատեքստային վերլուծությունը, համեմատական քննությունը և մշակութային մեկնաբանությունը, որոնք նպաստում են սովորողների լեզվամշակութային և հաղորդակցական կարողությունների զարգացմանը:

Առաջին գլխում կարևորություն է տրվում միջմշակութային հաղորդակցության խնդրին՝ ընդգծելով, որ դարձվածքների ուսուցումը պետք է նպաստի ոչ միայն լեզվական, այլև մշակութային միջնորդական կարողությունների զարգացմանը:

Երկրորդ գլխում՝ «**Ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման առավել նպատակահարմար մոդելը և նրա արդյունավետության հիմնավորումը փորձարարական ուսուցման միջոցով**», ներկայացվում են ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման մշակված մեթոդական համակարգը, դրա կառուցվածքային բաղադրիչները, կիրառման առանձնահատկությունները և արդյունավետության փորձարարական հիմնավորումը: Հետազոտության շրջանակում կարևոր տեղ է զբաղեցնում

հաղորդակցական, ճանաչողական, վերճանաչողական և միջմշակութային մոտեցումների համադրմամբ ստեղծված ուսուցման մոդելը, որի նպատակն է ապահովել դարձվածային միավորների գիտակցված ընկալումը, ակտիվ կիրառումը և խոսքային կարողությունների զարգացումը:

«Ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման առանձնահատկությունները մասնագիտական դասընթացում» ենթագլխում ներկայացվում են ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման ժամանակ կիրառվող հիմնական տեխնոլոգիաներն ու ռազմավարությունները՝ դիտարկելով դրանք ինչպես ընդհանուր լեզվի ուսուցման, այնպես էլ բառապաշարի և դարձվածային պաշարի յուրացման համատեքստում: Հիմնավորվում է, որ դարձվածային միավորների արդյունավետ ուսուցումը պահանջում է հաղորդակցական, ճանաչողական, վերճանաչողական, փոխհատուցող և հանրային-հուզական ռազմավարությունների համակցված կիրառում:

Քննության են առնվում ճանաչողական ռազմավարությունները, որոնց շրջանակում առանձնացվում են մենմոնիկ, դասակարգման, գծապատկերային համակարգման և նշումներ կատարելու մեթոդները: Մենմոնիկ ռազմավարությունների կիրառման ընթացքում կարևորվում են տրամաբանական կապերի բացահայտումը, զուգորդական պատկերների օգտագործումը և կրկնության մեխանիզմները, որոնք նպաստում են դարձվածային միավորների առավել կայուն յուրացմանը: Օրինակ՝ avoir du pain sur la planche, être débordé, avoir mille choses à régler դարձվածքները ներկայացվում են որպես «շատ գործ ունենալ» իմաստային շարքի հոմանիշ միավորներ, որը հնարավորություն է տալիս ուսանողներին յուրացնելու տարբեր պատկերների հիման վրա ձևավորված նույն իմաստային դաշտը:

Խոսվում է պատկերների և հիմնաբառերի կիրառման ռազմավարությունների մասին: Այս խմբում առանձնանում է հիմնաբառերի (mots-clés) օգտագործման ռազմավարությունը, որը ենթադրում է, որ ուսանողը որոշակի դարձվածային միավորը կապում է որևէ հիմնաբառի կամ արտահայտության հետ՝ այն առավել հեշտ մտապահելու նպատակով: Օրինակ՝ ուսումնասիրություններից մեկում առավել հաճախ կիրառված հիմնաբառը եղել է chocolat, որը կապված է trop d'une bonne chose (չափից շատ լավ բանը կարող է վնասել) դարձվածքի հետ: Նմուշային նախադասությունն այսպիսին է՝ Trop d'une bonne chose peut vous rendre malade, surtout si la bonne chose est le chocolat (Չափից շատ լավ բանը կարող է ձեզ հիվանդացնել, հատկապես եթե այդ լավ բանը շոկոլադն է): Նման զուգորդումները նպաստում են հիշողության ակտիվացմանը և դարձվածային միավորների առավել արդյունավետ վերարտադրմանը խոսքում:

Առանձնահատուկ տեղ է հատկացվում հաղորդակցական և քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիաներին: Հիմնավորվում է, որ դարձվածային միավորների վերլուծությունը նպաստում է քննադատական մտածողության զարգացմանը և խոսքային գործունեության ակտիվացմանը: Այս նպատակով առաջարկվում է կիրառել ԽԻԿ համակարգը՝ խթանման, իմաստավորման և կշռադատման փուլերով: Օրինակ՝ jouer avec le feu - կրակի հետ խաղալ դարձվածքի ուսուցման ընթացքում մտագրոհի միջոցով ուսանողները ներկայացնում են «կրակ» հասկացության հետ կապված զուգորդումներ (վտանգ, ռիսկ, անկանխատեսելիություն), այնուհետև քննարկում դարձվածքի փոխաբերական իմաստը: T-աձև աղյուսակի միջոցով համեմատվում են casser les pieds à quelqu'un - ձանձրացնել, նյարդայնացնել և հայերեն գլուխը տանել, նյարդերը քայքայել արտահայտությունները՝ բացահայտելով դրանց իմաստային և պատկերային ընդհանրություններն ու տարբերությունները: Գաղափարների քարտեզագրման մեթոդով վերլուծվում է avoir les dents longues - չափազանց հավակնոտ լինել դարձվածքի իմաստային դաշտը՝ «հավակնություն», «մրցակցություն», «նպատակասլացություն» հասկացությունների շրջանակում: Նշվում է, որ նման մեթոդները նպաստում են դարձվածքների ոչ միայն իմաստային, այլև մշակութային ընկալմանը:

Կարևորվում է տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը: Հիմնավորվում է, որ թվային ռեսուրսների կիրառումը հնարավորություն է տալիս դարձվածային միավորները ներկայացնելու իրական հաղորդակցական միջավայրում և ապահովելու դրանց ակտիվ գործածությունը խոսքում:

Խաղային տեխնոլոգիայի կիրառման շրջանակում ներկայացվում են դերախաղային առաջադրանքներ, առցանց վիկտորինաներ և հաղորդակցական խաղեր, որոնց ընթացքում ուսանողները տարբեր խոսքային իրավիճակներում կիրառում են mettre de l'eau dans son vin - զիջումների գնալ, poser un lapin - չներկայանալ պայմանավորված հանդիպմանը, donner sa langue au chat - հանձնվել և այլ դարձվածքներ: Նշվում է, որ խաղայնացումը նպաստում է ուսանողների հաղորդակցական ակտիվության, միջմշակութային զգայունակության և խոսքային ինքնուրույնության զարգացմանը:

Հիմնավորվում է նաև ռեֆլեքսիայի և հոգեբանական ինքնորոշման տեխնոլոգիաների կարևորությունը դարձվածային միավորների ուսուցման գործընթացում:

«Դարձվածային միավորների թարգմանության ուսուցման առանձնահատկությունները ֆրանսերենի մասնագիտական դասընթացում» ենթագլխում քննության առարկա է դարձել դարձվածային միավորների համարժեք և ոչ համարժեք թարգմանության հիմնախնդիրը՝ շեշտադրելով իմաստային, կառուցվածքային և մշակութային գործոնների

փոխազդեցությունը: Հիմնավորվում է, որ դարձվածային միավորների թարգմանությունը պահանջում է ոչ միայն լեզվական, այլև լեզվամշակութային, գործաբանական և միջմշակութային գիտելիքներ, քանի որ դրանք արտացոլում են տվյալ ժողովրդի մտածելակերպը, հոգեբանական և մշակութային առանձնահատկությունները:

Առանձնացվում է համարժեք և մասնակի համարժեք դարձվածային միավորների թարգմանությունը: Վերլուծվում են ամբողջական համարժեքների օրինակներ՝ *tirer les marrons du feu* - կրակից շագանակներ հանել, *nager contre le courant* - հոսանքին հակառակ լողալ, որոնք հնարավորություն են տալիս պահպանելու դարձվածային միավորի իմաստային, պատկերային և ոճական ամբողջականությունը: Միաժամանակ ներկայացվում են «թարգմանչի կեղծ բարեկամներ» համարվող դարձվածքները՝ *chercher midi à quatorze heures* (ցինջ երկնքում ամպ փնտրել), *mettre la main à la pâte* (մասնակցել գործին), որոնք բառացի թարգմանության դեպքում կարող են հանգեցնել իմաստային խեղաթյուրումների:

Ներկայացվում են նաև միջազգային դարձվածային միավորների տարբեր խմբեր՝ լատիներեն և հունարեն ծագում ունեցող թևավոր խոսքեր (*Carpe diem* - *Cueille le jour* - Որսա՛ պահը), արտալեզվական ընդհանրությունների հիման վրա ձևավորված դարձվածային զուգահեռներ (*revenir à ses moutons* - վերադառնալ բուն հարցին) և ժամանակակից լեզուներից փոխառված դարձվածքներ (*mettre la barre haut* - բարձր նշաձող սահմանել): Նման դարձվածքների ուսուցումը նպաստում է ուսանողների միջմշակութային իրազեկության և համեմատական լեզվամտածողության զարգացմանը:

Էական նշանակություն ունի նախադեպային դարձվածային միավորների թարգմանությունը, որոնք կապված են դիցաբանության, Աստվածաշնչի, գրականության և գիտելիքի այլ ոլորտների հետ: Վերլուծվում են *ouvrir la boîte de Pandore* - Պանդորայի տուփը բացել, *le baiser de Judas* - Հուդայի համբույր, *le complexe d'Œdipe* - Էդիպյան բարդույթ, *jouer les Don Juan* - Դոն Ժուանի դեր խաղալ դարձվածքները: Այս դարձվածային միավորների լիարժեք ընկալման և թարգմանության համար անհրաժեշտ է բացահայտել դրանց նախադեպային իրադրությունը, պատմամշակութային ենթատեքստը և խորհրդանշական նշանակությունը:

Ներկայացվում են նաև ֆրանսիական գրականությունից վերցված նախադեպային դարձվածքները՝ *le sommeil du juste* - խաղաղ, խոր քուն, որ վերցված է Վիկտոր Հյուգոյի «Թշվառները» վեպից, *le paysan du Danube* - (բառացի՝ դանուբի գեղջուկ) - կոպիտ, բոի մարդ, որը խոսում է ինչ պատահի. հայտնի է Լաֆոնտենի համանուն առակից, որոնք ուսանողներին հնարավորություն են տալիս բացահայտելու ֆրանսիական մշակույթի, գրականության և լեզվամտածողության առանձնահատկությունները: Նշվում է,

որ նախադեպային դարձվածքների թարգմանությունը ուսուցման գործընթացը դարձնում է առավել հետաքրքիր և նպաստում է լեզվամշակութային գիտելիքների ընդլայնմանը:

Առանձնակի ուշադրություն է դարձվում իրակութային և լակունար դարձվածային միավորների թարգմանությանը, քանի որ դրանք հաճախ չունեն ուղղակի համարժեքներ թիրախային լեզվում: Վերլուծվում են էթնոմշակութային և պատմամշակութային բաղադրիչներով դարձվածքները, որոնց թարգմանության ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն բառային իմաստը, այլև դրանց մշակութային և խորհրդանշական արժեքը, օրինակ՝ *être sorti de la côte de Charlemagne* ներկայացնում է մարդու՝ իր անձը չափազանց բարձր գնահատելու գաղափարը, որը հիմնված է Կառլոս Մեծի հեղինակությամբ և «աստվածային ծագման» խորհրդանշական ընկալման վրա, *avoir de la Sorbonne* – խելք ունենալ, խելացի լինել, ձևավորվել է ֆրանսիական բարձրագույն կրթության ամենահեղինակավոր հաստատություններից մեկի՝ Սորբոնի համալսարանի անունով:

«Ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման մեթոդական համակարգի արդյունավետության փորձարարական ստուգումը» ենթազբնագրով ներկայացվում են հետազոտության առանցքային հատվածը՝ ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման մշակված մեթոդական համակարգի փորձարարական ստուգումը և դրա արդյունավետության հիմնավորումը: Փորձարարական հետազոտությունն իրականացվել է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Թարգմանության և Միջմշակութային հաղորդակցության և քաղաքագիտության ֆակուլտետների երրորդ կուրսերի ուսանողների շրջանում: Փորձարարական խմբում ընդգրկվել են 41 ուսանող, իսկ ստուգողական խմբում՝ 36 ուսանող: Ուսանողների դարձվածային կարողունակության մակարդակը գնահատվել է 20 բալանոց սանդղակով:

Հիմնավորվում է, որ ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է դարձվածային նվազագույնի գիտական ընտրությամբ, որի հիմքում դրվում են թեմատիկ համապատասխանության, հաղորդակցական արժեքի, լեզվամշակութային նշանակության, հաճախականության, կիրառելիության և բազմալեզու համարժեքության չափանիշները: Այս սկզբունքների հաշվառմամբ մշակվել է փուլային և ինտեգրված մեթոդական մոդել, որը հիմնված է ճանաչողական-հաղորդակցական մոտեցման վրա և միավորում է հաղորդակցական, ճանաչողական, վերճանաչողական, փոխհատուցման և հուզազգացական ռազմավարությունները:

Մոդելի կառուցվածքում առանձնացվել են հարձվածային միավորների ընտրության չափանիշները:

Հարձվածային միավորների ընտրության չափանիշները

- թեմատիկ համապատասխանություն
- հաղորդակցական արժեք
- լեզվամշակութային նշանակություն
- հաճախականություն
- կիրառելիություն
- տարբեր լեզուներում համարժեքության առկայություն

Վարժությունների համակարգը մշակվել է՝ հաշվի առնելով խոսքային գործունեության հիմնական տեսակները՝ ընկալողական, վերարտադրողական, ինտերակտիվ և մեդիատիվ:

Փորձարարական ուսուցման ընթացքում կիրառվել են ռեցեպտիվ-ռեպրոդուկտիվ, լեզվական-խոսքային, թարգմանական և ոչ թարգմանական վարժություններ:

Հարձվածային միավորների ներմուծումն իրականացվել է

Հարձվածային միավորների ուսուցման նյութերը

- մասնագիտական տեքստեր
- գեղարվեստական բնագրեր
- տեսահոլովակներ
- գեղարվեստական ֆիլմեր
- փաստագրական ֆիլմեր

երկխոսությունների, մենախոսությունների, գեղարվեստական և ակադեմիական տեքստերի, ինչպես նաև իրական հաղորդակցական իրավիճակների մոդելավորման միջոցով: Օրինակ՝ boire comme un trou դարձվածքը

ներկայացվել է հաղորդակցական համատեքստում՝ նպաստելով դրա ոչ միայն բառային, այլև գործաբանական և մշակութային ընկալմանը:

Հատկապես ընդգծվում է դարձվածային միավորների իմաստավորման փուլը, որի ընթացքում կիրառվել են համատեքստից իմաստի կոահում, համարժեք և նկարագրական թարգմանություն, լեզվամշակութային և ծագումնաբանական մեկնաբանություն, ինչպես նաև հոմանիշների և հականիշների համեմատական վերլուծություն: Այս նպատակով ուսումնասիրվել են être aux anges / être au septième ciel - գտնվել յոթերորդ երկնքում, չափազանց երջանիկ լինել, avoir une faim de loup / mourir de faim - շատ քաղցած լինել հոմանշային դարձվածքները, ինչպես նաև հայերեն գործառական համարժեքները՝ tirer le diable par la queue - ծայրը ծայրին հասցնել, chercher une aiguille dans une botte de foin - ասել փնտրել խոտի դեզի մեջ և այլն:

Դարձվածային միավորները ներկայացվել են նաև թեմատիկ խմբերով՝ մարդու բնութագիր (avoir le cœur sur la main - մեծահոգի լինել, être un mouton noir - սպիտակ ագռավ լինել), հասարակական կարգավիճակ (être un gros bonnet - մեծ պաշտոնյա լինել, gravir les échelons - կարիերայում առաջ գնալ), աշխատանք և անգործություն (mettre la main à la pâte - աշխատանքի անցնել, se tourner les pouces - անգործ նստել), մասնագիտություններ (blouses blanches - սպիտակ խալաթավորներ, gens de plume - գրչի վարպետ), ինչպես նաև հույզեր և հոգեվիճակներ (avoir une peur bleue - շատ վախենալ, être aux anges - շատ երջանիկ լինել): Նման խմբավորումները նպաստել են ուսանողների բառապաշարի համակարգված ընդլայնմանը և դարձվածքների հաղորդակցական կիրառության զարգացմանը:

Հարցման արդյունքները ցույց են տվել, որ ուսանողների 88 %-ը դարձվածային միավորներ յուրացնելիս կիրառում է ճանաչողական ռազմավարություններ՝ օգտվելով բառարաններից, լեզվական կորպուսներից և առցանց աղբյուրներից: Միաժամանակ արձանագրվել է, որ դարձվածային միավորների ակտիվ կիրառությունը մենախոսության և երկխոսության մեջ դեռևս բավարար մակարդակի վրա չէ, որը հիմնավորում է հաղորդակցական և վերճանաչողական ռազմավարությունների համակցված կիրառման անհրաժեշտությունը:

Փորձարարական և ստուգողական խմբերի արդյունքների համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ առաջարկվող մեթոդական համակարգը նպաստում է ուսանողների դարձվածային պաշարի հարստացմանը, դարձվածային միավորների իմաստային, կառուցվածքային և ռճական առանձնահատկությունների գիտակցված ընկալմանը, ինչպես նաև դրանց ակտիվ կիրառությանը բանավոր և գրավոր խոսքում: Հատկապես արդյունավետ են եղել այն առաջադրանքները, որոնցում դարձվածային միավորները ներկայացվել են բնագրային միջավայրում, ուղեկցվել

մշակութային մեկնաբանությամբ և համեմատվել մայրենի լեզվի համարժեքների հետ:

Փորձարարական ուսուցման արդյունքները հաստատել են հետազոտության վարկածը, ըստ որի՝ ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման արդյունավետությունը զգալիորեն բարձրանում է հաղորդակցական, ճանաչողական և վերճանաչողական ռազմավարությունների համակցված կիրառման պայմաններում: Հիմնավորվում է նաև, որ մշակված մեթոդական մոդելը կարող է կիրառվել ոչ միայն ֆրանսերենի, այլև ուրիշ օտար լեզուների մասնագիտական դասընթացներում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Ֆրանսերենի դարձվածային միավորները լեզվի բառապաշարի կարևորագույն բաղադրիչներից են, որոնք էական դեր են կատարում սովորողների հաղորդակցական կարողունակության ձևավորման գործընթացում:

2. Դարձվածային միավորների ուսուցումը արդյունավետ է այն դեպքում, երբ համակարգված է իրականացվում և հիմնված է հաղորդակցական-ճանաչողական մոտեցման վրա՝ հաշվի առնելով նաև վերճանաչողական և փոխհատուցող ռազմավարությունների դերը:

3. Դարձվածային միավորների ընտրությունը պետք է իրականացվի բազմագործոն մոտեցմամբ՝ հաշվի առնելով հաղորդակցական արժեքը, լեզվամշակութային առանձնահատկությունները, հաճախականությունը և կիրառելիությունը:

4. Հայերենի և ֆրանսերենի դարձվածային համակարգերի զուգադրական վերլուծությունը նպաստում է, որ սովորողներն ավելի խորքային ըմբռնեն և ճիշտ կիրառեն դարձվածային միավորները:

5. Դարձվածային միավորների ուսուցման արդյունավետությունը բարձրանում է դրանց ներկայացման ժամանակ հասկացության և պատկերային հիմքերի բացահայտման, ինչպես նաև ուսուցման տարբեր ռազմավարությունների համադրման պայմաններում:

6. Առաջարկված մեթոդական մոդելը, որը հիմնված է ճանաչողական-հաղորդակցական մոտեցման վրա, ապահովում է դարձվածային միավորների փուլային ներմուծում, յուրացում և կիրառություն խոսքում:

7. Փորձարարական ուսուցման արդյունքները ցույց են տվել, որ առաջարկվող մոդելի կիրառումը նպաստում է ուսանողների դարձվածային պաշարի հարստացմանը, ինչպես նաև նրանց բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը:

8. Դարձվածային միավորների ուսուցման գործընթացում ժամանակակից տեխնոլոգիաների և ինտերակտիվ մեթոդների կիրառումը (ներառյալ

խաղայնացումը) բարձրացնում է ուսուցման մոտիվացիան և արդյունավետությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Գյուրջինյան Ա., Հայերենի աչք բաղադրիչով դարձվածքների ֆրանսերեն համարժեքները, Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի N2: Գիտական աշխատություններ: Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն: Պրակ է: Երևան, 2009, էջ 179-184:

2. Գյուրջինյան Ա., Դարձվածային միավորների ընտրության չափանիշներն ու սկզբունքները ֆրանսերենի մասնագիտական դասընթացում, Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, Մանկավարժություն և հասարակական գիտություններ, 2(69), Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի «Լինգվա» հրատարակչություն, Երևան, 2024, էջ 96-117:

3. Գյուրջինյան Ա., Ֆրանսերենի խոսակցական ոճի դարձվածային միավորների ուսուցման ռազմավարությունը, Ռուսագիտության արդի հիմնախնդիրները գիտամեթոդական հանդես, 14(18), Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ, Երևան 2024, էջ 243-259:

4. Գյուրջինյան Ա., Հայախոս ուսանողներին ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման տեխնոլոգիաները, Հայագիտական հանդես N 3-4 (66-67), Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան 2024, էջ 244-265:

5. Գյուրջինյան Ա., Ժողովրդանուն և դիցանուն բաղադրիչներով ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման ռազմավարությունը, Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի «Լինգվա» հրատարակչություն, Երևան, 2025, էջ 62-74:

6. Գյուրջինյան Ա., Դարձվածային միավորների թարգմանության ուսուցման առանձնահատկությունները ֆրանսերենի մասնագիտական դասընթացում, Ռուսագիտության արդի հիմնախնդիրները գիտամեթոդական հանդես, 16 (20), Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ, Երևան 2025, էջ 234-253:

ГЮРДЖИНЯН АШХЕН ДАВИДОВНА
МЕТОДИЧЕСКАЯ СИСТЕМА ОБУЧЕНИЯ ФРАЗЕОЛОГИЧЕСКИМ
ЕДИНИЦАМ В ПРОФЕССИОНАЛЬНОМ КУРСЕ ФРАНЦУЗСКОГО ЯЗЫКА

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук
по специальности 13.00.02 - «Методика преподавания и обучения» (французский язык).

Защита диссертации состоится 29-ого июня 2026 г. на заседании специализированного совета 020 «Педагогика» КВОН РА по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна, по адресу: 0010, г. Ереван, пр. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования

Полноценная коммуникация на иностранном языке невозможна без усвоения морфологических, синтаксических, стилистических и прагматических, дискурсивных особенностей фразеологизмов. Следовательно, первостепенное значение приобретает проблема выбора эффективной методики и стратегии обучения фразеологизмам, основанного на коммуникативно-когнитивном подходе.

Целостная методическая система обучения французским фразеологизмам, особенно в образовательной среде РА, все еще не разработана в достаточной степени. По этой причине необходимо учитывать языковой уровень студентов, когнитивные особенности, опыт мультилингвизма и профессиональные запросы.

Когнитивный подход к обучению фразеологизмам необходимо рассматривать в контексте формирования ментальной лексики, параллельно обеспечивая ее структурное, прагматическое и стилистическое изучение посредством применения индуктивного и дедуктивного метода. Наряду с этим необходимо разработать принципы выборки фразеологизмов и тематические группы слов, обеспечивающие поэтапное и систематизированное усвоение фразеологических единиц.

В силу того, что обучение фразеологии французского языка в вузах зачастую не характеризуется системностью и обусловлено индивидуальным подходом преподавателя, целевая выборка фразеологических единиц и методическая организация обучения становятся основными задачами настоящей работы. Стилистические особенности фразеологических единиц также требуют отдельного внимания, так как их образная и аксиологическая составляющие зачастую затрудняют как обучение, так и подбор переводческих эквивалентов.

Цель исследования заключается в том, чтобы разработать и внедрить методическую систему выборки фразеологизмов и обучения фразеологии французского языка, обеспечивая эффективное восприятие, усвоение и применение фразеологических единиц в рамках специализированного курса французского языка.

Задачи исследования

- исследовать специальную литературу, посвященную сопоставительно-типологическому анализу лексики французского и армянского языка и их фразеологической системы;
- систематизировать стратегии подбора фразеологических единиц и обучения фразеологии,

- выявить структурные и содержательные особенности фразеологических единиц французского языка, учитывая аналогичные особенности их армянских аналогов;

- разработать методическую систему обучения фразеологии французского языка, учитывая особенности специализированного курса французского языка.

Научная новизна исследования

В работе впервые предлагается полноценная методическая модель обучения фразеологическим единицам французского языка, основанная на современных стратегиях обучения и применяемая в рамках специализированного курса французского языка.

Теоретическая значимость исследования

В рамках исследования конкретизированы стратегии обучения фразеологическим единицам, разработана методическая система, основанная на когнитивном и концептуальном анализе.

Практическая значимость исследования

Результаты исследования могут быть применены также и в рамках специализированных курсов по другим языкам, а также в целях разработки новых учебно-методических материалов.

ASHKHEN DAVIT GYURJINYAN METHODOLOGICAL SYSTEM FOR TEACHING PHRASEOLOGICAL UNITS IN THE PROFESSIONAL FRENCH LANGUAGE COURSE

Thesis submitted for the degree of Candidate of Pedagogical Sciences, specialty 13.00.02 – Teaching and Learning Methodology (French Language).

The defense of the thesis will take place on 29th of June, 2026 at the session of the Professional Council 020 HESC for the award of a scientific degree at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan. Address: 0010, 17 Tigran Mets Ave., Yerevan, Armenia.

SUMMARY

The Relevance of the Research

Full-fledged foreign-language communication is impossible without mastering the morphological, syntactic, stylistic, discursive and functional features of phraseological units. Therefore, selecting effective methods and strategies for teaching them on the basis of a communicative-cognitive approach becomes a priority.

A comprehensive methodological system for teaching French phraseological units, especially within the educational environment of the Republic of Armenia, has not yet been sufficiently developed. Consequently, it is necessary to take into account students' language proficiency levels, cognitive characteristics, multilingual experience, and professional needs.

Within the framework of the cognitive approach, teaching phraseological units should be considered in the context of forming a mental lexicon, ensuring their systematic structural, functional, and stylistic study, as well as the combination of inductive and deductive methods. At the same time, it is important to develop principles for selecting

phraseological units and thematic vocabulary lists that will ensure the gradual and systematic acquisition of phraseological competence.

Since the teaching of French phraseological units in universities is often unsystematic and dependent on the instructor's individual approach, their purposeful selection and methodological organization become the key issues of the present research. The stylistic peculiarities of phraseological units also require special attention, as their expressive and evaluative nuances often complicate the processes of teaching and translation.

The Aim of the Research

The aim of the research is to substantiate and develop a methodological system for the selection and teaching of French phraseological units in a professional course, ensuring their effective perception, acquisition, and use in speech.

The Research Objectives

- to study the comparative-typological literature related to the vocabulary, particularly the phraseological stock, of the French and Armenian languages,
- to systematize the strategies for selecting and teaching phraseological units,
- to identify the structural and semantic features of phraseological units, taking into account their Armenian equivalents,
- to develop a methodological system for teaching French phraseological units, considering the specific features of the professional course.

The Scientific Novelty of the Research

For the first time, a comprehensive methodological model for teaching French phraseological units is proposed, based on the integration of modern teaching strategies and applicable in a professional course.

The Theoretical Significance of the Research

Within the framework of the research, the strategies for teaching phraseological units have been clarified, and a methodological system based on cognitive and conceptual analysis has been developed.

The Practical Significance of the Research

The results may be applied in the teaching of French and other foreign languages, as well as in the development of new instructional and methodological materials.

